Ֆիզիկական անձանց «Սեյֆ» կուտակային հաշվի Տեղեկատվական ամփոփագիր

Հրապարակվել է՝ 16.09.2026թ.

1. «Սեյֆ» կուտակային հաշվի նկարագրություն, էական դրույթներ՝

1.1. «Սեյֆ» կուտակային հաշիվը (այսուհետ՝ ԿՀ) բացվում է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Հաճախորդ) կողմից պայմանագրի ստորագրման օրը:

1.2. Հաճախորդը ԿՀ պայմանագիր կնքելու համար «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) է ներկայացնում՝

- անձը հաստատող փաստաթուղթ,
- հանրային ծառայությունների համարանիշ/ չունենալու մասին տեղեկանք,
- Հաճախորդի ներկայացուցչի դեպքում՝ նաև պատշաճ վավերացված լիազորագիր,
- Բանկի կանոնակարգերով սահմանված լինելու դեպքում՝ այլ լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

1.3. ԿՀ պայմանագիրը կնքվում է անժամկետ:

1.4. ԿՀ բացվում է ՀՀ դրամով և ՌԴ ռուբլով:

1.5. ԿՀ բացման համար նվազագույն գումար սահմանված չէ:

1.6. ԿՀ-ով կարող են իրականացվել հետևյալ գործառնությունները՝

- դրամական միջոցների մուտքեր և ելքեր,
- ներբանկային և միջբանկային փոխանցումներ,
- արտարժույթի անկանխիկ փոխարկման գործառնություններ,
- այլ գործառնություններ:

ԿՀ-ն չի կարող օգտագործվել վարկային/ավանդանդային միջոցների կամ այլ նպատակներով:

1.7. ԿՀ ամսական սպասարկումն անվճար է:

1.8. ԿՀ նկատմամբ կիրառվում են նաև Բանկում գործող «Բանկային հաշվի բացման և սպասարկման պայմանները» այնքանով, որքանով դրանք չեն հակասում ԿՀ բացման և սպասարկման պայմաններին:

1.9. Բանկը երաշխավորում է Հաճախորդի կողմից կատարված գործառնությունների գաղտնիությունը՝ համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի:

1.10. Դուք իրավունք ունեք հաղորդակցվել Բանկի հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, վերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիկսերից և ապահովում է գաղտնիություն:

2. Կուտակային հաշվի տոկոսների հաշվարկման և հաշվեգրման կարգը՝

2.1. Բանկը ԿՀ դրամական միջոցների մնացորդի նկատմամբ հաշվարկում և վճարում է տոկոսներ հետևյալ կարգով՝

- Տոկոսադրույքը հաշվարկվում է Գործառնական օրվա փակման դությամբ օրական մնացորդի նկատմամբ օրացուցային ամսվա ընթացքում և վճարվում է ընթացիկ ամսվա վերջին օրը:

2.2. ԿՀ բացելիս տոկոսային ժամանակաշրջանի սկիզբ է համարվում ԿՀ բացման օրը, իսկ ավարտ է հանդիսանում ԿՀ բացման ամսվա վերջին օրացուցային օրը:

2.3. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել ԿՀ պայմանները, սակագներն ու տարեկան տոկոսադրույքները: ԿՀ պայմանների, սակագների և տարեկան տոկոսադրույքների փոփոխման վերաբերյալ Բանկը հաճախորդին տեղեկացնում է վերջինիս կողմից ընտրված տարբերակով՝ փոփոխման օրվանից առնվազն 15 օրացուցային օր առաջ: Բանկի կողմից տեղեկատվությունը համարվում է Հաճախորդին տրամադրված՝ այն վերջինիս փոստային/էլեկտրոնային հասցեով ուղարկելու կամ Բանկի տարածքում վերջինիս համար այն հասանելի դառնալու պահից:

2.4. Բանկի կողմից տարեկան տոկոսադրույքի փոփոխման դեպքում նախկինում վճարված տոկոսները վերահաշվարկի ենթակա չեն:

2.5. ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից ՀՀ դրամով ներդրված դրամական միջոցների դիմաց տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով, իսկ արտարժույթով ներդրված դրամական միջոցների դիմաց տոկոսագումարները Հաճախորդի ընտրությամբ կարող են վճարվել ներդրված դրամական միջոցների արժույթով կամ ՀՀ դրամով (տոկոսագումարի վճարման պահին ՀՀ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքով), բացառությամբ Կենտրոնական բանկի սահմանած դեպքերի:

2.6. Կուտակային հաշվի տարեկան (անվանական) տոկոսադրույքները՝

Արժույթ	AMD	RUR
Տարեկան տոկոսադրույք		
եթե տվյալ օրվա Հաշվի մնացորդը ≤50,000 AMD/10,000 RUR	0.0%	0.0%
եթե տվյալ օրվա Հաշվի մնացորդը ≥50,001 AMD/10,001 RUR	4.0%	2.5%

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎԻՆ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՔ ԴՈՒՔ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՍՈՒՅՆ ԱՄՓՈՓԱԳՐԻ 2.8 ԿԵՏՈՒՄ:

2.7. Ձեր Կուտակային հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա:
Տարեկան պարզ (անվանական) տոկոսադրույքով տոկոսների հաշվարկման օրինակ՝

Օրինակ 1
G –ընթացիկ ամսվա համար հաշվարկված տոկոսագումար,
B (1,000,000 ՀՀ դրամ) – ընթացիկ ամսվա հաշվի օրական մնացորդ,
R (4%) – օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան տոկոսադրույք,
K (30 օրացուցային օր) – ընթացիկ ամսվա օրերի քանակ:

$$G=\frac{1.000.000\times 4\%\times 30}{365}=3.288$$ **ՀՀ դրամ (ընթացիկ ամսվա համար), ներառյալ 10% եկամտային հարկ**

Օրինակ 2
G –ընթացիկ ամսվա համար հաշվարկված տոկոսագումար,
B (10,000 ՀՀ դրամ) – ընթացիկ ամսվա հաշվի օրական մնացորդ,
R (0%) – օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան տոկոսադրույք,
K (30 օրացուցային օր) – ընթացիկ ամսվա օրերի քանակ:

$$G=\frac{10.000\times 0\%\times 30}{365}=0$$ **ՀՀ դրամ (ընթացիկ ամսվա համար)**

2.8. «APY-էյ-Փի-Ուայ (այսուհետ՝ APY)»՝ տարեկան տոկոսային եկամտաբերություն: APY ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանայիք Դուք՝ Ձեր կողմից ԿՀ հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և սահմանված պարբերականությամբ ստացված տոկոսագումարները կապիտալացնելու արդյունքում: ԿՀ տարեկան տոկոսային եկամտաբերությունը կարող է հասնել մինչև 4.07%:

Օրինակ 1
G –ընթացիկ ամսվա համար հաշվարկված տոկոսագումար,
B (1,000,000 ՀՀ դրամ) – ընթացիկ ամսվա հաշվի օրական մնացորդ,
R (4.07%) – օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան տոկոսադրույք,
K (30 օրացուցային օր) – ընթացիկ ամսվա օրերի քանակ:

$$G=\frac{1.000.000\times 4.07\%\times 30}{365}=3345$$ **ՀՀ դրամ (ընթացիկ ամսվա համար),**

2.9. **«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝** հաշվեգրված տոկոսները Հաճախորդին վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես հարկային գործակալ, գանձում է եկամտային հարկ՝ տոկոսագումարի (եկամտի) 10%-ի չափով և փոխանցում պետական բյուջե:

3. Կուտակային հաշվի փակման դրույթներ՝
3.1. Հաճախորդը ցանկացած պահի կարող է փակել ԿՀ-ը և ստանալ դրամական միջոցները: Հաշիվը փակելու դեպքում նախկինում վճարված տոկոսները Հաճախորդի կողմից վերադարձման ենթակա չեն:
3.2. Հաճախորդի կողմից ԿՀ-ով գործառնություններ չկատարելու դեպքում հաշվի պահպանման ծախսերը (առկայության դեպքում)՝ ելնելով գործարք չկատարելու վաղեմությունից Սակագներով սահմանված միջնորդավճարները կամ այլ ծառայության վճարները, առաջնահերթ անվիճելի անակցեպտ կարգով գանձվում են Հաճախորդի ՀՀ դրամով հաշվից/ներից, վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Հաճախորդի արտարժույթային այլ հաշվից/ներից, որի արդյունքում արտարժույթի՝ ՀՀ դրամի փոխարկումն իրականացվում է փոխարկման պահին ՀՀ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով, որը հրապարակվում է ՀՀ ԿԲ կողմից պաշտոնական կայքում:

4. Տեղեկատվություն Կուտակային հաշվի սակագների վերաբերյալ՝

Հաշվի նվազագույն մնացորդ	Առանց սահմանափակման
Հաշվի բացման/փակման միջնորդավճար	**Անվճար**
Հաշվի ամսական սպասարկման վճար	**Անվճար**
Կանխիկով գործարքներ	
Կանխիկ և անկանխիկ միջոցների մուտքագրում (ՀՀ դրամ, ՌԴ ռուբլի)	**Անվճար**
Կանխիկ եղանակով մուտքագրված միջոցների կանխիկացում (ՀՀ դրամ, ՌԴ ռուբլի)	**Անվճար**
Անկանխիկ եղանակով մուտքագրված միջոցների կանխիկացում (ՀՀ դրամ, ՌԴ ռուբլի)	Համաձայն Բանկում գործող «Բանկային հաշվի բացման և սպասարկման պայմանների և սակագների»
Հաշվից փոխանցումներ	
Ներբանկային փոխանցումներ (ՀՀ դրամ)	
Ներբանկային փոխանցում Ֆիզիկական անձի հաշվին (ՌԴ ռուբլի)	Անվճար
Ներբանկային փոխանցում իրավաբանական անձի և ԱՁ հաշվին (ՌԴ ռուբլի)	8%
Միջբանկային փոխանցումներ ՀՀ տարածքում (ՌԴ ռուբլի)	Համաձայն բանկային հաշվի սակագների
Միջբանկային փոխանցումներ ՌԴ տարածքում (ՌԴ ռուբլի)	Համաձայն բանկային հաշվի սակագների
Բանկային հաշվով քաղվածքի տրամադրում[1]	
Քաղվածքների ստացման Հաճախորդի կողմից նախընտրված հաղորդակցման եղանակով պարտադիր քաղվածքի տրամադրում առաջին անգամ	**Անվճար**
մինչև 1 տարվի վաղեմության	1,900 ՀՀ դրամ
1 տարուց ավել վաղեմության	3,900 ՀՀ դրամ
Տեղեկանքների տրամադրում Բանկի ստանդարտ տիպային ձևով[2]	
Հայերեն լեզվով ստանդարտ (էլեկտրոնային եղանակով)	Անվճար
Հայերեն լեզվով ստանդարտ (յուրաքանչյուր օրացուցային տարվա (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը) ընթացքում մեկ անգամ թղթային եղանակով)	Անվճար
Հայերեն լեզվով (ավանդի առկայության վերաբերյալ)	2,900 ՀՀ դրամ
Ռուսերեն և անգլերեն լեզուներով	3,900 ՀՀ դրամ
Տեղեկանքների տրամադրում ոչ ստանդարտ ձևով[2]	5,900 ՀՀ դրամ
Հաճախորդի հարկային գործակալից ստացված եկամուտների և այդ եկամուտներից պահված (վճարված) եկամտային հարկի վերաբերյալ տեղեկանք	3,900 ՀՀ դրամ
Կուտակային հաշվի սպասարկման այլ սակագներ	Համաձայն Բանկում գործող «Բանկային հաշվի բացման և սպասարկման պայմանների և սակագների»

[1] Ներառյալ ԱԱՀ:
[2] Յուրաքանչյուր ձևի համար

4.1. Հաճախորդը ԿՀ քաղվածքի ստացման եղանակն ընտրում է ԿՀ բացման պահին (էլեկտրոնային փոստով, փոստով, Առցանց հարթակով): Հաճախորդի պահանջով Բանկը պարտավոր է 1 աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս տրամադրել Կուտակային հաշվով քաղվածք 4-րդ կետի Սակագներին համապատասխան: Բանկը պարտավոր չէ քաղվածք տրամադրել, եթե հաշվետու ժամանակաշրջանում ԿՀ-ով շարժը բացակայում է (ԿՀ-ն չի դեբետավորվել կամ կրեդիտավորվել):

5. Այլ լրացուցիչ պայմաններ՝

5.1 ԿՀ մուտքագրումներ կարող են կատարվել հետևյալ եղանակներով՝
- «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ցանկացած մասնաճյուղում,
- «Վիդեո բանկ» ծառայության միջոցով,
- «Ինտերնետ/Մոբայլ Բանկինգ» ծառայության միջոցով,
- Tell-Cell/ Easy Pay/Mobidram/Fast Shift/Idram վճարային տերմինալների միջոցով:

5.2 Կուտակային հաշվի «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների պայմաններին և կանոններին (ՕՖԵՐՏԱ) կարող եք ծանոթանալ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ պաշտոնական կայքում www.vtb.am («Կուտակային հաշիվ» բաժնում):

6. Վեճերի լուծման կարգը՝

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հաճախորդն հնարավորություն ունի Բանկի և իր միջև բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Տեղեկացնում ենք, որ Բանկը կնքել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր այն պահանջներով, որոնց ընդհանուր չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի ընդհանուր գումարը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

7. Այլ դրույթներ՝

7.1. **Հայտարարություն:** Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

7.2. **Հայտարարություն:** Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Ընդ որում, Հաճախորդն իր հաշվից դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ տեղեկացվում է տվյալ հաշվի քաղվածքի միջոցով՝ իր կողմից նախապես ընտրված հաղորդակցման /քաղվածքի ստացման/ եղանակով և կարգով:

7.3. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է Հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդինե («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում):

7.4. «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA))» հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

8. Կուտակային հաշվի գումարը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝ համաձայն «Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից պակաս է ավանդ	Եթե դրամային ավանդը 7միլիոն դրամից ավել է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով)	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)

* Նույն բանկում բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ: Համատեղ ավանդը համարվում է առանձին ավանդ՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:

* Ավանդ են համարվում նաև ֆիզիկական անձանց կողմից Բանկում բացված բոլոր հաշիվներին/քարտերին գտնվող դրամական միջոցները և դրանց վրա հաշվարկված տոկոսագումարները:

Ծառայության վերաբերյալ ամբողջական տվյալներին կարող եք ծանոթանալ www.vtb.am կայքում, ինչպես նաև վանգահարելով միասնական տեղեկատվական ծառայություն 87 87 հեռախոսահամարով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՌ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է՝ www.fininfo.am